ՌՈՒԲԵՆ ԳԱՐԵԳԻՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

1998թ. սեպտեմբերի 12-ին, կյանքի 70-րդ տարում, երկարատև, ծանր հիվանդությունից հետո վախճանվեց հայ նշանավոր պատմաբան, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Գարեգինի Սահակյանը:



Ռ.Գ.Սահակյանը ծնվել է 1929թ. Թբիլիսիում: 1948թ. տեղափոխվելով Երևան՝ նա ընդունվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտել է 1953թ.՝ ստանալով պատմաբան-միջազգայնագետի որակավորում:

Սկսած 1954թ., Ռ.Գ.Սահակյանի կյանքը սերտորեն կապված է եղել Գիտությունների ակադեմիայի հետ: Ունենալով մասնագիտական հիանալի պատրաստվածություն, տիրապետելով արևելյան և արևմտյան մի շարք լեզուների՝ նա 1954թ. ընդունվում է Պատմության ինստիտուտի ասպիրանտուրան և ձեռնամուխ լինում թուրքագիտության խորը ուսումնասիրությանը: Հետագա տարիներին նա աշխատում է Պատմության ինստիտուտում (1957–1958), ԳԱ համակարգում գտնվող արևելագիտության սեկտորում (1958–1961, 1963–1970), իսկ 1961–1963թթ. ստանձնում է Գիտությունների ակադեմիայի կողմից հրատարակվող հասարակական գիտությունների «Տեղեկագրի» պատասխանատու քարտուղարի պարտականությունները:

1970թ. Ռ.Գ.Սահակյանը տեղափոխվում է աշխատանքի ՀԿԿ ԿԿ ինֆորմացիայի և արտասահմանյան կապերի բաժին, նախ իբրև տեսուչ, այնուհետև՝ բաժնի վարիչի տեղակալ: 1975–1981թթ. նա առաջին քարտուղարի կարգավիճակով աշխատել է ԽՍՀՄ դեսպանատանը Ֆրանսիայում: Վերադառնալով Հայաստան՝ Ռ.Գ.Սահակյանը 1981թ. աշխատանքի է անցնում ԳԱ Արևելագիտության ինստիտուտում, որտեղ զբաղեցնում է նախ Իրանի բաժնի վարիչի պաշտոնակատարի (1981–1983), իսկ 1983թ. մինչև կյանքի վերջը՝ Թուրքիայի բաժնի վարիչի պաշտոնները:

Բազմակողմանիորեն զարգացած և մեծ էրուդիցիայի տեր պատմաբանի գիտական հետաքրքրությունները մշտապես կապված են եղել Հայկական հարցի և հայերի ցեղասպանության, Թուրքիայի նոր և նորագույն պատմության, թուրքական և արևմտյան պատմագրության հարցերի լուսաբանման հետ: Նրա թեկնածուական ատենախոսությունը, որը նվիրված էր խորհրդա-թուրքական դիվանագիտական հարաբերությունների պատմությանը 1925–1935թթ., թեպետ չհրատարակվեց առանձին գրքով, այդուհանդերձ, հիմք դարձավ նրա «Սովետա-թուրքական հարաբերությունների

պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ» (1964) մենագրության համար:

Ոչ բոլոր պատմաբանների մուտքն է նշանավորվել պատմական գիտության ասպարեզ՝ պատմագրությանը նվիրված աշխատություններով: Ռ.Գ.Սահակյանն այդ եզակի բացառություններից էր: Հենվելով արխիվային և հրապարակված դիվանագիտական փաստաթղթերի վրա՝ նա հիմնավորապես մերկացրեց թուրք պատմաբանների ձեռնարկած՝ պատմական անցյալի մեկնաբանման աղավաղման փորձերը, որոնք վերաբերում էին խորհրդա-թուրքական դիվանագիտական հարաբերություններին՝ դրանց սկզբնավորման օրվանից մինչ հետպատերազմյան ժամանակաշրջանը:

Ռ.Գ.Սահակյանը նույն սկզբունքային մոտեցումն է դրսևորել նաև Ե.Ղ.Սարգսյանի հեղինակակցությամբ 1963թ. հրատարակած «Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ» ուսումնասիրությունում: Փոքրածավալ, բայց արժեքավոր այդ գրքում հեղինակները խորը քննական վերլուծության են ենթարկել թուրք պատմաբանների հակագիտական տեսակետները հայ ժողովրդի՝ XIX–XX դդ. պատմության մի շարք առանցքային հարցերի շուրջ: Դրանք են՝ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, հայերի ցեղասպանության, տեղահանությունների և Արևմտյան Հայաստանում նրանց թվաքանակի, 1920–1921թթ. Անդրկովկասում ծավալված իրադարձությունների հետ կապված խնդիրները: Իր արդիականությունն առ այսօր պահպանող այս ուսումնասիրությունը 1965թ. անգլերեն թարգմանությամբ լույս տեսավ նաև ԱՄՆ-ում:

Տասնամյակներ շարունակ ուշադրության կենտրոնում պահելով թուրքական, ինչպես նաև եվրոպական պատմագրության զարգացման փուլերն այս ասպարեզում՝ Ռ.Գ.Սահակյանը 1990-ական թթ. նախաձեռնեց հոդվածների մի արժեքավոր ժողովածուի հրատարակությունը, որը 1993թ. լույս տեսավ նրա խմբագրությամբ՝ "Новая история Армении в трудах современных зарубежных авторов": Այս ժողովածուի երեք բաժիններ, որոնք նվիրված են ժամանակակից ֆրանսիական, անգլիական և թուրքական պատմագրության ձեռքբերումներին և ելևէջներին, պատկանում են նրա գրչին:

Ռ. Գ. Սահակյանը խոր հետք թողեց միջազգային հարաբերությունների պատմության ուսումնասիրության բնագավառում՝ իբրև թուրք-ֆրանսիական հարաբերությունների պատմության խոշոր գիտակ: «Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919–1921թթ.» (1970) և "Турецко-французские отношения и Киликия в 1918–1922гг." (1985) մենագրություններում, որոնցից վերջինը Ռ.Գ.Սահակյանը 1985թ. պաշտպանեց իբրև դոկտորական ատենախոսություն, Կիլիկիայում տեղի ունեցած իրադարձությունների լայն հենքի վրա, մանրազնին վերլուծության են ենթարկվել թուրք-ֆրանսիական դիվանագիտական կապերի զարգացումը, քեմալականների կողմից սանձազերծված հայկական կոտորածների, հայերի ինքնապաշտպանական մարտերի պատմությունը: Նա միաժամանակ ամբողջ խորությամբ բացահայտել է ֆրանսիական կառավարական շրջանների վարած թրքամետ քաղաքականության բնույթը, որը կործանարար հետևանքներ ունեցավ Կիլիկիայում բնակվող հազարավոր հայերի համար:

Հայերի ցեղասպանությանը և դրան հարակից հարցերին նվիրված՝ Ռ.Գ.Սահակյանի առավել արժեքավոր հոդվածները զետեղված են 1990թ. լույս տեսած նրա «Ցեղասպանության պատմությունից» ժողովածուի մեջ, որը

հնարավորություն է ընձեռում հստակ պատկերացում կազմելու նրա նախասիրությունների և պատկառելի գիտական վաստակի մասին:

Ռ.Գ.Սահակյանը մեծ ավանդ է ներդրել հայերի ցեղասպանությանը և Հայկական հարցի պատմությանը նվիրված "Геноцид армян в Османской империи" (1966), «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923)» (1972) փաստաթղթերի ժողովածուները հրատարակության պատրաստելու գործում: Նա ոչ միայն այդ ժողովածուները կազմող հեղինակներից էր, այլև դրանցում ընդգրկված նյութերը ծանոթագրողը: Անուրանալի է նրա ներդրումը "Армянский вопрос" հանրագիտարանի հրատարակության գործում (1991), որի հիմնական հեղինակներից էր և խմբագրական կազմի անդամ: Նրա գրչին են պատկանում այստեղ զետեղված մեծ թվով ֆրանսիացի գործիչների և պատմաբանների նվիրված հոդվածներ:

Ռ.Գ.Սահակյանն առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում ֆրանսիական պատմագրության նվաճումներին: Նրա թարգմանությամբ 1991թ. հայերեն լեզվով լույս ընծայվեց ֆրանսահայ պատմաբան Ս.Աֆանասյանի «Սարդարապատի հաղթանակը» ուսումնասիրությունը:

Ռ.Գ.Սահակյանը միաժամանակ մեծ հոգածություն էր դրսևորում երիտասարդ պատմաբանների պատրաստման կարևոր գործում: Նա բազմիցս ներկայացրել է հայ պատմական գիտությունը միջազգային գիտաժողովներում, ակտիվորեն մասնակցել մեր հանրապետության հասարակական կյանքին, ղեկավարել «Հայաստան-Ֆրանսիա» ընկերությունը:

Կյանքի վերջին ամիսներին, մաքառելով ծանր հիվանդության դեմ, հեռախոսային զրույցների ընթացքում նա շարունակ նշում էր Գիտությունների Ազգային Ակադեմիա այցելելու իր բուռն ցանկության մասին, որն ավաղ, մնաց անիրագործելի:

Վ.Ա.ՊՈՂՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու